




ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ «ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ»-Ը*

Լամբրոնացին եկեղեցական արարողություններն ու ծեսերը չի կտրում ժամանակից, նրա պահանջներից ու ժողովրդի մաշակից: Նա ձգտում է եկեղեցին դարձնել հետաքրքիր և կենսունակ: Եկեղեցական և քաղաքական գործունեության հանգամանքներով նա էլ Վկայասերի պես միշտ շփման մեջ էր քրիստոնյա տարբեր եկեղեցիների հետ, լավ ծանոթ էր այդ եկեղեցիների պատմությանն ու ծեսերին: Տարտմուն, Կ. Պոլսում և ուրիշ տեղերում նա շատ անգամ էր տեսել հունական և լատինական պատարագների փայլն ու շքեղությունը: Համեմատելով սրանք հայ եկեղեցու ժամերգության և առանձնապես պատարագի հետ, նա վրձնեց բարեփոխություններ մտցնել հայ եկեղեցում: Եթե որոշ բարեկարգություններ չընաչողվեին անցկացնել Արևելյան Հայաստանի և Կիլիկիայի եկեղեցիներում, նա մտադիր էր մի քանի բարեփոխություններ մտցնել գոնե Տարսուսի թեմի եկեղեցիներում, որի առաջնորդն էր ինքը: Ինքնաստիճյան հասկանալի է, որ անչափ դժվար էր այդպիսի համարձակ և պատասխանատու ձեռնարկումը: Նախագգալով այդ՝ նա ասում է. «Արդ, նախ առաջին ի սկզբանս աղաչեմ զամենեւեան գթովն Քրիստոսի Յիսուսի, մի՛ որ համարեացի զիս անգամ կամ բժիշկ մեղանչական առ ի զայլս դատելով զանձն արդարացուցանել... և մի յորժամ լւեք զդիմումն բանիցդ պէսպէս անկարգութեան

յալունիչ, ի ներքոյ լոցին կացեալ զընդդէմ յառնելն փխրածէ՛ք՝ իբր թէ անձանց լինիք վրէժխնդիր. քանզի վրէժխնդիւր ամենեցուն մեզ այս է՝ որ զօրէնս Աստուծոյ փափաքէ նորոգել և ոչ այն, որ արտաքին արկածիցն լինի ջատագով»³⁶:

Բայց և այնպէս Լամբրոնացին ո՛չ վախեցաւ և ո՛չ էլ վարանեց: Ահա այս նպատակով էլ գրված է գիրքը. «...կարևոր համարեցայ լցօտտ եղբարց հակառակ շաղօք առ խորհրդոյս քննութիւն գնալ... թերևս գոնեալ ակներև տեսեալ ձգեցիմք առ ի փափաք ըղձալոյն. և մի որ զմեզ այսպանեցէ տեսեալ մինչև ի չնչին իրաց իջեալ ի քննութիւն, այլ զպատճառն ուցի, զի վասն այսորիկ քննեցաք զփոքունս ընդ մեծամեծացն, և խորհրդածեցաք զմանունսն, որպէսզի մի նոքին որպէս հարևանցի ինչ իրս արհամարհեցիցն, և մեք զուցոյք պարտական դատաստանի ասողին»³⁷: Լամբրոնացին հավատացած էր, որ իր այս գիրքը անպայման քննության կդրվի եպիսկոպոսական ժողովում և կաթողիկոսարանում, ապա լրացումներով կամ կրճատումներով կհաստատվի և կթույլատրվի գրքում նշված բարեփոխումները կիրառելու հայ եկեղեցում: Բայց այդպէս չեղաւ: Ահա այս էր պատճառը, որ Լամբրոնացու սպասածին հակառակ, նրա գիրքը քննության չառնվեց ոչ մի տեղ: Ել ոչ միայն չքննվեց, նույնիսկ ոչ որ չկարդաց այն, այլ տարիներ շարունակ մնաց «արկղներում»:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թ. № 6-ից:

³⁶ Անդ, էջ 23—24:

³⁷ Անդ, էջ 235:

Այդ անարդար վերաբերմունքի դեմ դառնություններ է բողոքում Լամբրոնացին. «Մի անգամ և երկիցս հանի գոյն յատենան և ի ծողվա եպիսկոպոսաց և իշխանաց, և ոչ եղև պարագայումս գոնե ընթերցման կամ ունկընդրությամբ»³⁸. Այս անտարբերության դեմ Լամբրոնացին բողոքել է նաև Լևոն թագավորին. «Քանզի այլ անգամ եղև այս հարկս և խնդրեցիք ի մեզնք բան՝ որ առ մեզ ուղղությամբ վկայ, տուաք գրոց սրբոց վկայությամբ, որ զամենայն հակառակողս ի հաւանությունն նուաճել ի սիրելն զուղղությունն, և ծանր եղև ձեզ ընթերցումն կամ այլոց գնոյն ցուցանել»³⁹: Եվ այդպես Լամբրոնացու «Պատարագի մեկնությունը» չընդունվեց և չգնահատվեց ժամանակակիցների կողմից: Սակայն դեռ մի դար էլ չէր անցել, երբ հետագա սերունդը հիացմունքով և երախտագիտությամբ ընդունեց այդ բովանդակալից ուսումնասիրությունը, տարածվեց բազմաթիվ ընդօրինակումներով: Լամբրոնացուն քաջ ծանոթ են եղել պատարագի հեղինակներին (Բարսեղի, Նազիազանցու, Իգնատիոսի, Աթանասի, Ոսկեբերանի) գործերը, որոնցից նա օգտվել է: Սակայն, հայկական պատարագի պատմությունը լուսաբանելու տեսակետից Լամբրոնացու «մեկնությունը» մի ինքնուրույն և անգուգական հուշարձան է, որը պաճառ կերպով ցույց է տալիս հայկական պատարագի անցած ուղին ու նրա վիճակը 12-րդ դարավերջում: Այստեղ հիմնավոր և շատ արժեքավոր տեղեկություններ է տրվում, որ մեր պատարագի կարգավորությունը եղել է տակավին 4-րդ դարում՝ Լուսավորչի ժամանակ, ապա այն վերակարգավորվել է Ներսես Մեծի օրով, Ոսկեբերանի պատարագից առաջ: Այնուհետև 5-րդ դարում հայոց պատարագը, որոշ բաներ առնելով Ոսկեբերանի պատարագից, ավելի ճոխացվեց, լրացվեց:

Հովհաննես Արճիշեցին իր «Պատարագի համառօտ մեկնություն» գրքում գրում է. «ոչ եթէ յաղագս միոյ անձին և եթ պատարագի Քրիստոս, այլև, վասն ամենայն աշխարհի...»⁴⁰: Այնուհետև, գնահատելով Լամբրոնացու մեկնության բազմակողմանիությունն ու խորությունը, ասում է. «Մեծն Խոսրով՝ հայրն Գրիգորի Նարեկացոյն նախ՝ և Ներսէս վերատեսուչն Տարսնի լեռոյ, ընդարձակ և պայծառ քննութեամբ ետուն մեզ զմեկնությունն պատարագիս»⁴¹: Ասացինք, որ

Լամբրոնացին ունեցավ շատ հետևողներ: Դեռ մի դար չանցած երևացին այդ կարգի ուրիշ գործեր, ինչպես՝ Հովհանն Արճիշեցու, Մովսէս Երզնկացու, Հովհաննես Պլուզ վարդապետի և ուրիշների կատարած մեկնությունները: Սակայն սրանցից և ոչ մեկն էլ չունի Տարսնի եպիսկոպոսի «Գերագոյն Յիսուսաբոյս ըղձանօք և մաղթանօք լեռնովք, քան զորս չիք թերևս ազնւագոյն և աստուածազնւագոյն ասացումս ի լեզուս մեր»⁴²: Հայոց պատարագին վերաբերող այս հակիրճ տեսությունից հետո, այժմ ծանոթանալով Լամբրոնացու այս գրքի բովանդակությանը:

Գիրքը բաղկացած է երկու ընդարձակ բաժիններից: Առաջին բաժնում հաջ եկելուցն վերաբերող խորհրդածություններն ու քննաբանություններն են, իսկ երկրորդում՝ պատարագի մեկնությունը և «Հարցաբանությունը»: Գրքի մեծ մասը հատկացված է պատարագի համակողմանի մեկնությանը: Նախքան բուն նպատակին՝ պատարագի մեկնությանն անցնելը, Լամբրոնացին խորհրդածության եղանակով, ելակետ ունենալով Հին ու Նոր կտակարանները և եկեղեցական հայրերի գործերը, վեր է հանում հաջ եկելուցն ժամանակագրության և ժամասացության մեջ վերջին դարերում մուտք գործած խորթ ձևերն ու արարողությունները, նշում է դրանց պատճառները, ապա անում համապատասխան հետևություններ և առաջարկություններ: Գրքի սկզբում խորհրդածելով հավատի, դավանանքի, Քրիստոսի Մարդեղության և սուրբ Երրորդության մասին, հատկապես ընդգծում է Քրիստոսի խաչելության խորհրդի հետ՝ առաքյալի հետեւելալ խոսքերով. «Արիւնն Յիսուսի որ ի ձեռն հոգոյն մատոյց զանձն անարատ պատարագի Աստուծոյ, սրբեացէ զվիղծ մտաց ձերոց և մեռելոսի գործոց ձերոց պաշտել զԱստուած կենդանի»⁴³: «Խորհրդածություն» մասում ցույց է տրվում մի կողմից եկեղեցում մուտք գործած աղավաղումներն ու խափանումները, իսկ մյուս կողմից՝ ժամանակի քահանաների, անգիտությունը, որոնք իբր ժամասացության մեջ առաջնորդվում են «ոչ օրինօքն Աստուծոյ, այլ զաւանդութեամբ ծերոցն»⁴⁴: Եկեղեցում մուտք գործած անկարգությունները մեկնիչը կապում է ժամանակի և կյանքի անբարենպաստ, վատ պայմանների հետ և դրանցով էլ բացատրում. «Այսպէս է տեսանել և մերս անբարի ժամանակ, աւանդութեանցն զբազումս

³⁸ Կաթ. Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 467:

³⁹ Նամականի, Վենետիկ, 1865, էջ 210:

⁴⁰ Հով. Արճիշեցի, Մեկնություն պատարագի, Էջմիածին, 1860, էջ 15:

⁴¹ Անդ, էջ 7:

⁴² Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 86:

⁴³ Պատ. մեկնություն, էջ 20:

⁴⁴ Անդ, էջ 23:

անբերելի վրեժխնդիրս, և օրինացն և ոչ բնաւ բնողս»⁴⁵:

Լամբրոնացիին պատարագի մեկնությունը գրել է «վանական միաբան եղբայրների» խնդրանքով և ոչ թե անձնական շահերի կամ փառամոլության համար, այլ ելնելով ճշմարտության և ազգային եկեղեցու շահերից. «Աղաչեմ զամենեւեման... մի որ համարեացի զիս անզգամ կամ բժիշկ մեղանչական առ ի զայս դատելով զանձն արդարացուցանել, այլ զիջանել ձեզ առ իմ տկարություն և մանկական իմաստ, որ ի սիրոյ ամենեցուն շարժեալ՝ եկի յազգային յանդգնություն, որ իմս նուաստութեան անմարդ էր ծերունեաց և կատարելոց հասակաւ ուսուցիչ լինել»⁴⁶: Ապա զգուշացնում է միաբան եղբայրներին և բոլոր հոգևորականներին այն բանի համար, որ եթե ինքը պատարագի մեկնության մեջ անխնայ ու խիստ քննադատի ոմանց, թող ոչ ոք չգարմանա, որովհետև ամեն ինչ ասվելու է բարեկամաբար, բայց խիստ և ճիշտ. «Մի կշտամբեցայ յունքէ վասն որոնելոյ զատուանչական սերմանեալ անկարգությունս... յաշտոքոտքն և տգէտքն զմեզ ոչ եղծեալ օրինաց նորոգիչ համարին, այլ նոր աւանդութեան մոծիչք... վասն պտորիկ ախորժէ բանս բժշկութեան՝ զի խոր խոցոտեալսն կնկծելի դեղովք առողջացուցանել, և յիմարական թմբրութենէն զարթոցանել...»⁴⁷: Իր սուր քննադատությունը պատկերավոր եղանակով համեմատում է բժշկության հետ, թե ինչպես երբ վիրահատը կտրում կամ խարանձում է հիվանդի չարորակ խոցը, այդ ժամանակ հիվանդը սուր ցավեր է զգում և հետո հանգստանում: Ինչպես բուժվող հիվանդը իրեն ցավ պատճառող, բայց բուժող բժշկին իրեն թշնամի չի համարում, այդպես էլ բացերը ճշող, ցավ պատճառող անաչառ քննադատին չպետք է թշնամի համարել⁴⁸: Իսկ նրանք, որոնք արատները վերացնելու և ցավերը բուժելու ազնիվ նպատակի նշանակությունը չեն հասկանում, մթազնում են նրանց միտքն ու խիղճը, այդպիսիները, տրտնջում է Լամբրոնացիին, փոխանակ գնահատելու հոգեբույժ խոսքի արժեքը «խորշին ի մէնջ»⁴⁹: Ավանդամոլություն և տգիտություն հասկացությունները Լամբրոնացու մոտ հավասարաչափ վտանգավոր են, բանի որ այդ ախտերով տառապող մարդիկ ոչ միայն ժամանակի ու կյանքի հետ հառնաթույց չեն կարող քայլել, այլև խանգարում են

նրանց, ովքեր անսալով ժամանակի և կյանքի ձայնը, ուզում են առաջ գնալ: Ավանդամոլներն ու տգետները, — դատում է Լամբրոնացիին, — ճգնում են լուսամիտ հայացքներ ունեցող մարդկանց նույնիսկ մեղադրել՝ զրպարտելով ս. Գրքի ու հայրենի ավանդները անտեսելու և իր կուրորեն ուրիշ ազգերին հետևելու մեջ: Մերկացնելով այս կարգի նեղմիտ մտածողներին, նա ցույց է տալիս, որ ինքը ոչ թե խախտում կամ աչքաթող է անում ս. Գրքի ասածներն ու ազգային ավանդությունները, այլ կանգնել է Հին ու Նոր կտակարանների դրույթների և հայրենի իմաստալից ավանդների սկզբունքների վրա. «Մի փոխեացես զսամանս, զոր եղին հարքն քո, և որ քակէ զցանկ, հարքէ զնա օձ, բայց ասա՝ զո՞րս խոստովանիս դու հարս քո, եթե զատաքեալսն և զհայրապետսն, որք աստուածաշունչ բանիք դեռ ևս կենդանի են ի միջի մերում, և առ ամենայն ճշմարտութիւն առաջնորդեն, և ես եմ նոցա ճշտագով, առ ի նոցանէ վարժեալ և աշակերտեալ»⁵⁰: Կի լիկիայում կատարվող հասարակական-քաղաքական իրադարձությունները, խաչակրաց արշավանքները, շփումն ու կապը եվրոպական երկրների հետ, զարգացած քաղաքների շվայտ կյանքը, աշխարհիկ տրամադրությունները, արանցից ամեն մեկն իր ձեռով ու չափով նույնպես նպաստել է հավատի ու բարեպաշտության թուլացմանը: Ըստ Լամբրոնացու, ուրեմն եկեղեցական կարգազանցությունները ունեցել են իրենց ներքին և արտաքին պատճառները. «Բոլորն հարցուք նախ զժամանակակալսնսն սուրբապետայ անկարգութեանց»⁵¹:

Ներկայացնելով և վերլուծելով եկեղեցու, հավատի թուլացման փաստերն ու դրանց պատճառները, Լամբրոնացիին առաջարկում է միջոցներ, որոնց գործադրումով պիտի վերականգնվի հայ եկեղեցու խախտված կարգը: Այդ ամենից հետո նա դնում է մի ընդհանուր հարց ևս՝ հի՞ն, թե՞ նոր ուղիով գնալ, այսինքն՝ հետևել՝ Լուսավորչի դրած կարգ ու կանոնին, թե՞ շարունակել աղավաղումների նոր ուղին: Այս սկզբունքային հարցին նա պատասխանում է այսպես. «Բարիք համարիմ զբարեխիշատակացն (Լուսավորչի, Ներսեսի և Սահակի դրած կարգերը—Գ. Հ.) նախապատուել զօրինադրութիւն»⁵²: Ինչպես հավատ և կարգապահության անկումը կապում է ժամանակի ու կյանքի հետ, այդպես էլ պատմականորեն ցույց է տալիս, թե ո՞ր աղավաղումը կամ փոփոխությունը ե՞րբ և ի՞նչ պատճառներով է կատարվել:

⁴⁵ Անդ, էջ 23:

⁴⁶ Անդ, էջ 23:

⁴⁷ Անդ, էջ 24:

⁴⁸ Անդ, էջ 24—25:

⁴⁹ Անդ, էջ 25:

⁵⁰ Անդ, էջ 25:

⁵¹ Անդ, էջ 25:

⁵² Անդ, էջ 26:

Ամենից առաջ, որպես փաստ վերցնում է եկեղեցիներին կից ժամատները, որոնք քրիստոնեության առաջին դարերում, ապա լուսավորչի և Ներսեսի ժամանակներում չեն եղել, այլ շատ հետո են կառուցվել: Եղել է միայն եկեղեցին՝ մի շենք, մի աղոթատուն, որտեղ միասին են աղոթել հոգևորականները և ժամավոր հավատացյալները. «Յարձանացեալ խորանացն որք կան մինչև ցայսօր հաստատուն, և ոչ ունին առլնթեր ժամատուն... աւէ պատմութիւնն. նաև թագաորքն Բագրատունեաց, և որ առ նոքօք հալապետք՝ ընդ նոյն գնացին շալիղ՝ եկեղեցին միայն շինեալ տունս աղօթից»⁵⁵: Այստեղ էլ ցույց է տրվում այս նորաձև թերության պատմական պատճառները: Երբ այլազգիները ներխուժում են Հայաստան և երկրին տիրապետում, հայ հասարակական կյանքի հետ միաժամանակ շատ է տուժում նաև հայ եկեղեցին: Տեղից-տեղ գաղթող հայերը չունեին մշտական ապահով կյանք. այդպիսի վիճակում էր նաև եկեղեցին: Ամեն անգամ, այն էլ այդպիսի պայմաններում, հնարավոր չէր կառուցել երբեմնի մեծ ու վեհ եկեղեցիների նման շենքեր, որտեղ կարողանային տեղավորվել հարյուրներով ժամավորներ: Ստիպված շինում էին ժամանակավոր, փոքրիկ, անշուք եկեղեցիներ՝ ժամատներով, որպեսզի ժամավորները արարողությունների ժամանակ բոլորը տեղավորվեին: Սելջուկների արշավանքներից փախչող հայերի մեծ մասը տեղավորվեց հունական հողերում, առանձնապես Կիլիկիայում, որտեղ հույներն արդեն վաղուց ունեին իրենց եկեղեցիները: Տեղացիները հայերին չէին թողնում իրենց եկեղեցում աղոթելու. հայերը հարկադրված էին ունենալ իրենց սեփական, թեպետև փոքր ու անշուք եկեղեցին: Ահա դրա համար էլ այդ գաղթական հայերը թեկուզ դժվարությամբ, սակայն «շինեցին միայն ըստ ժամանակին պիտոյից մատրունս փոքրկունս... տկարանայր եկեղեցին ամփոփել գնոսս և ի հարկէ շինեցին առլնթեր գտունսն»⁵⁶: Այս կապակցությամբ նախատելով հույներին, որ թույլ չեն տվել «թափառական» հայերին հաճախելու իրենց եկեղեցին, մինչև նոր եկեղեցիներ շինելը: Վերոհիշյալ ժամատները անշուք, աղքատ և անհարմար շենքեր են եղել, որոնք բոլորովին չեն նմանվել հայ եկեղեցու կառուցվածքին ու ոճին: Դրանք էլ իրենց անհաշակությամբ, աղքատությամբ մեծ վնաս են տվել ժամասացությանն ու բարեպաշտությանը: Զարմանում է մեկնիչը, որ

այդ անշուք ժամատները փոխանակ վերացնելու, տարեցտարի բազմացնում են. «Յաղթեաց հեշտութիւնն ճշմարիտ օրինացն, և սկսան ընդ ամենայն տեղիս շինել զայս տունս՝ իբր առաւել զգոշութան տալով կարծիս. և հարկատրապէս ձգեցին զանձինս արտաքոյ ամենայն բարեձևութեան»⁵⁷: Իսկ որոնք են այդ ժամատներում աղոթելու վատ հետևանքները, ըստ Լամբրոնացու՝ ա) աղոթքը պետք է կատարել միայն եկեղեցում սուրբ սեղանի և քահանայի առաջ, այնինչ ժամատումը եկեղեցուց անջատ է. բ) դըրսում աղոթելիս ժամավորներն անուշադիր կլինեն, կխոսեն իրար հետ, որոնց մտքերը ոչ թե դեպի երկինք, այլ դեպի երկիր են ուղղվում. գ) դուրս լինելով եկեղեցուց, ժամավորը չի լսում պատարագի քաղցրաձայն երգերն ու աղոթքները, որոնք մարդու հոգին հմայում են և ազնվացնում. դ) քահանաները կտրվելով ժողովրդից, ընդունելով, որ ամեն տեղ կարելի է աղոթել, շատ անգամ եկեղեցի չեն գնում և եկեղեցական արարողությունները կատարում են իրենց տանը, շատ հաճախ մահճակալների վրա պատկած դրությամբ:

Դատապարտելով այս օտարամուտ, վնասակար սովորությունը, ժողովրդին եկեղեցուց դուրս աղոթել տալը, Լամբրոնացին բացատրում է, որ հայ եկեղեցին «ամենեցուն է այս տեղի, ամենեցուն պարտ է ի մաս աղօթել»: Միանգամայն անթույլատրելի և աններելի օրինազանցություն է «զեկեղեցիս քրիստոնեից ընդդէմ փակել»: Աստուծո տունը «համարձակելի է մտանել ամենեցուն... մեծամեծաց և փոքունց, չարագործաց և բարեպաշտից... իսկ եղկելի ոք հսկանակ այսմ լինելով... միայն աւանդութեանցն սովորութեանց լինի շատագով»⁵⁸: Վերջապես այս առիթով դրսևորվում է Լամբրոնացու ոչ միայն դեպի եկեղեցին ունեցած ջերմ սերը, այլև մարդասիրությունը: Նա գտնում է, որ եկեղեցին միաժամանակ առաքինության, բարեկրթության և դաստիարակության մի վայր է, որ պիտի գնան ոչ միայն հավատացյալները, իշխաններն ու մեծերը, այլև ամեն կարգի մարդիկ, նույնիսկ անհավատներն ու հանցավորները: Անհրաժեշտ է սրանց «ժողովել ամենեցուն լեկեղեցին՝ անհաւատից և հաւատացելոց, մեղաւորաց և արդարոց, սրբոց և պղծոց, չարագործաց և բարեպաշտից»⁵⁹: Հասկանալի է, որ այդպիսի համարձակ և մարդասիրական լայնախոհության համար այն ժամանակներում քարացած մտքի տեր որոշ հո-

⁵⁵ Անդ, էջ 28:

⁵⁶ Անդ, էջ 30:

⁵⁵ Անդ, էջ 30:

⁵⁶ Անդ, էջ 33:

⁵⁷ Անդ, էջ 34—35:

գեվորականներ պիտի հարձակվեին Լամբրոնացու վրա և մեղադրեին նրան: Այսպիսի մեղադրանքները կանխելու և նախապես ինքնապաշտպանության դիմելու նպատակով, նա գրում է. «Եւ թէ ինձ յանդգնութիւն համարիս զասացեալս, առ զգիրս նորա (խոսքը Դիոնիսիոս Արիսպագացու գրքի մասին է—Գ. Հ.) ընթերցիր և գտցես, զի ոչ լուծանեմ պատուիրանացն Աստուծոյ»⁵⁸: Հայ եկեղեցու դերը նսեմացնելու, աղավաղելու գործում ժողովրդի անագատ, անապահով պայմաններից բացի պակաս բացասական դեր չեն խաղացել իրենց աստիճանին անարժան որոշ հայ հոգևորականներ. «Ինձ թուի թէ յանիմաստ առաջնորդաց և ի տգէտ վերականգնաց, որք թշուառական մտք առաք զայցելութիւն եպիսկոպոսութեան»⁵⁹ և եկեղեցին հասցրիք այդ ողբալի վիճակին,—ասում է Լամբրոնացին: Այդպիսի անարժան առաջնորդներն ու վերականգնողները հայ եկեղեցին համարել են «որպէս զմարմնական իշխանութիւն, շահավաճառ համարելով զաստուածապաշտութիւնն, անբաւական ազգահոյեմամբ արծաթոյ և փառաց, որոց հարկ էր զախտ մտացն ազգեցուցանելով անփոյթ առնել եղծման եկեղեցական օրինաց... մանաւանդ ի բազմաց, որք անկիրթ են իմաստից և ի բարորսն մոլորեալս և նորաձևութիւն թուի հարցն սրբոց հրամանացն հետադարձութիւն»⁶⁰: Այդ թերություններից հետո Լամբրոնացին հետևյալ գլխում կանգ է առնում նորամուտ մյուս ձևերի վրա, որոնք սողակել են եկեղեցի սելջուկների արշավանքների ժամանակ, երբ հայերը կորցրեցին իրենց պետականությունը և հայրապետական Աթոռը դարձավ թափառական: Այդ նորամուտ փտանգավոր ձևերից մեկն էլ այն է, որ գրեթե ջնջվեց տարբերությունը արքեպիսկոպի և քահանաների միջև: Մեկնության այս գլխում ընդգծվում է, որ շատ մեծ է այդ երկու դասի տարբերությունը և՛ աստիճանի, և՛ պարտականությունների տեսակետից. «Վասն զի քահանայութիւն նախապատվութիւն է և երէցութիւն ի մէջ ժողովրդեանն, իսկ կրօնաւորութիւն... կարգ խնայրութեան և լուրջեան և ոչ իշխանութեան»⁶¹: Նախ և առաջ քահանայացուն պետք է ունենա հասուն տարիք, ամուսնացած և տեղյակ հայ եկեղեցու խորհուրդներին, ժամակարգությանը և արարողություններին: Ավելին. ամեն պատահական մարդու քահանա չեն ձեռնադրում: Նրան պետք է ընտրի և առաջնորդի հոգևոր հա-

մայնքը, հաստատի և ձեռնադրի եպիսկոպոսը՝ եթե նա իր վարքով ու պատրաստվածությամբ համապատասխան է ըստ եկեղեցական կանոնների: Ուրեմն, իր պատվով, դիրքով ու կոչումով քահանան շատ բարձր է արեղայից, որը «փոքր եւ ետին է կարգ կրօնաւորութեան քան զպատիւ քահանայութեան»⁶²: Բացի այդ, քահանան պատասխանատու է իր հոգևոր հոտի բարեպաշտության և դաստիարակության համար, մինչդեռ արեղան այդպիսի պարտականություններից ազատ է: Այնինչ մեր ժամանակներում,—ասում է Լամբրոնացին,—բոլորովին այլ կերպ են նաչում քահանայի և արեղայի վրա: Փոխանակ ժողովրդին ապահովելու բանիմաց քահանաներով և վերջիններիս միջոցով բարեպաշտություն քարոզելու, բազմացել են արեղաները, որոնք հավատացյալների մեջ այն անկեղծ ու դերը չունեն, ինչ որ քահանաները: Առաջ, սակայն, այդպես չի եղել: Այս սխալը մասամբ էլ կատարվել է եպիսկոպոսների, առաջնորդների անփութությամբ, անբարեխղճության պատճառով. «Զի ամենեքեան նոքա ի վանորայս և ի մենաստանս կրօնաւորս բազմացուցանեն... իսկ քահանայութեան և սարկաւագութեան պատուով՝ սակաւս զմանս ի նոցանէ ընտրեալ վիճակին»⁶³: Եվ քանի որ այդ առաջնորդներն ու եպիսկոպոսները մտահոգված չեն որակյալ, արժանավոր քահանաներ ընտրելու գործով, ուստի, հաճախ ձեռնադրվում են պատահական հողագործ կամ հովիվ մարդիկ, որոնք հետագայում դառնում են ծաղր ու ծանակի առարկա. «զի ի հովուական ցայոյ և ի մանակալութեան գործոյ, և յայոց անբան արհեստից առեալ... քահանայս կատարեմք»⁶⁴: Այս բոլորի հետևանքով ահա թե ինչ է ստացվում. «կուրուքսմբ կուրաց առաջնորդեմք, քահանայս օծեմք... անգիտացեալ տգիտութեամբ յիմարելոցս»⁶⁵: Ահա թե ինչու է ընկել հայ եկեղեցու երբեմնի գրավիչ հեղինակությունը, ահա թե ինչու ժողովրդի մեջ թուլացել է հավատը և վատահոյությունը հոգևորականների նկատմամբ՝ եզրակացնում է Լամբրոնացին: Այնուհետև,—ավելացնում է մեկնիչը,—քահանաները ոչ միայն տգետ ու շահասեր են, այլև անմաքուր: Պատարագի և ժամասացության ժամանակ չեն զգեստավորվում վայելուչ ձևով, աղոթում և Ավետարան են կարդում ծածկած գլխով, ժամասացությունը կատարում են անհետաքրքիր, կիսաապուշտ, սուտ ու սխալ: Այս քահանաների մեջ կան և

⁵⁸ Անդ, էջ 35:⁵⁹ Անդ, էջ 40:⁶⁰ Անդ, էջ 40:⁶¹ Անդ, էջ 42:⁶² Անդ, էջ 42:⁶³ Անդ, էջ 43:⁶⁴ Անդ, էջ 43:⁶⁵ Անդ, էջ 45:

այնպիսիները, որոնք ոչ միայն թերու են, այլև թերահավատ, շահամոլ և «միայն մորթով ոչխարաց պատրեն»⁶⁶։ Ուշագրավ է, որ այս դիտողություններից հետո, երկակստությունը ինքը՝ մեկնիչը և ուն կրոնավոր Հովհաննես անունով, հարց ու պատասխանի միջոցով, ավելի կոնկրետ և ավելի հետաքրքիր ձևերով են ցուցադրել հայ եկեղեցում գոյություն ունեցող զանգվածներն ու բացերը՝ տգետ և թերահավատ քահանաների սխալ գործունեության հետևանքով։ Լամբրոնացին այնքան է դառնացած վերևում հիշված թերությունների պատճառով, որ հուզված բացականչում է. «Եկ, Երեմիա, ցառակից մարգարե, և վշտակցելով ողբա գրելուսն իմ և ժողովրդեան իմոյ»⁶⁷։

Իսկ ինչպիսիս պետք է լինի քահանան ըստ Լամբրոնացու։ Ամենից առաջ նա պիտի լինի գիտակից և բարեպաշտ, օրինակելի վարք ու բարքով, հավատով։ Ժամերգության ժամանակ պիտի զգեստավորվի մաքուր և վալելույ։ Եթե արեղային մեկնիչը նմանեցնում է երկրագործի, ապա քահանային համեմատում է թագավորի հետ և ահա թե ինչու՝ «քանզի որպես մեծ է թագաւորութիւն քան զերկրագործութիւն, այդպէս մեծ է քահանայութիւն քան զարեղայութիւն, և որպէս նմա բազմապատիկ իմաստութիւն պիտոյ է՝ որ թագաւոր է, և զայլոց օգուտն տնօրինէ, այդպէս է երիցուն, ետ սրբութեանն պիտոյ է և իմաստութիւն»⁶⁸։ Բացի այդ, քահանան պիտի անձնուրաց ծառայի իր սուրբ գործին, նա միշտ պետք է նկատի ունենա ժողովրդի մանավանդ հոգեկան շահերը և երբեք դրանց չվնասի. նա պարտավոր է իմանալ «զառաւելութիւն իւրաքանչիւր գործոցն, զոր կատարէ և ըստ որում երկրագործին սխալանք՝ անձին միայն վը-

նաւէ, իսկ թագաւորին՝ ամենայն աշխարհին, աչապէս սխալանք արեղային փոքր է առ քահանային»⁶⁹։ Լամբրոնացին տակ ընկնադատողի դերում չի հանդես գալիս։ Նա չի գրադրում միայն այլաբնանադատությանը, այլ այդ ամենի մեջ մեղավոր է համարում նաև իրեն՝ և՛ որպէս եպիսկոպոս, և՛ որպէս Տարսուհի թեմի առաջնորդ՝ «քանզի իմ է եղբորն վերն և բժշկութիւնն»⁷⁰։ Պաշտպանելով հայ առաքելական եկեղեցու ավանդական, ազգային նկարագիրը, նա պահպանողական ազգային սմապարծ չէ։ Հայ եկեղեցին նա երբեք կտրված ու անջատ չի համարում մյուս քույր եկեղեցիներից։ Լամբրոնացին մի կողմից պահպանում է նախնիների դրած եկեղեցական օրենքները, ախտյան է ազգային եկեղեցու, մյուս կողմից անջրպետ չի դնում քրիստոնյա մյուս ազգերի եկեղեցիների միջև, չի անտեսում դրանց նմանությունները, փոխազդեցություններն ու ընդհանրությունը։ Ավելին. նա դեմ է ոչ միայն անհիմն ավանդամոլության, այլև խարազանում է սմապարծությունը անկախ այն բանից, թե այդ սմապարծ աչառուն որ ազգին է պատկանում. «Ես ասեմ զայդ և ոչ բնավ, թէ՛ մեք միայն Քրիստոսի ժողովուրդք»։ Նշանակում է՝ դավանաբանական վեճերը, ծիսական որոշ տարբերությունները իրավունք չեն տալիս մի ազգի կրոնավորներին վարկաբեկելու մի ուրիշ ազգի եկեղեցին ու նրա ազգային ավանդությունները։ Բոլոր ազգերի եկեղեցիներն էլ պետք է համերաշխ գործեն, իսկ որպէսզի այդ համերաշխությունն ու փոխադարձ հարգանքը տևական լինի, եզրակացնում է Լամբրոնացին՝ «վասն այսորիկ պարտ է մեզ հարցն սրբոց բարեկարգութեանց հետեւել...»⁷¹։

⁶⁶ Անդ, էջ 48:

⁶⁷ Անդ, էջ 47:

⁶⁸ Անդ, էջ 53:

⁶⁹ Անդ, էջ 58:

⁷⁰ Անդ, էջ 47:

⁷¹ Անդ, էջ 58:

